ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

2025 թվականի դեկտեմբերի 03-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 գնման պայմանագրի

ք. Մեծամոր

«27» ապրիլ 2026թ.

Մեծամորի համայնքապետարանը, համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ և <<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ կոնսորցիում-ն, ի դեմս «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Բանդուրյանի, ով գործում է «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ-ի կանոնադրության և «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ-ի և «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված «Պայմանագիր Կոնսորցիումի մասին»-ի հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2025 թվականի դեկտեմբերի 03-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.16 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար 1-ին չափաբաժնի մասով հատկացված 54,000,000.00 (հիսունչորս միլիոն) ՀՀ դրամի՝ ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը 1-ին չափաբաժնի մասով շարադրել նոր խմբագրությամբ՝ ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր,
Վարչական կենտրոն 4,
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332000901, 900332239434
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝
________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ և <<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ կոնսորցիում
ՀՀ, Երևան, Պարոնյան 21/4,
contact.urbandevelopment@gmail.com
info@legendint.com
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570006708267012
ՀՎՀՀ՝ 02917998

Տնօրեն՝
________ Հ. Բանդուրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*2025 թվականի դեկտեմբերի 03-ին կնքված*
*N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-25/101 ծածկագրով պայմանագրի*
*«27» մայիս 2026թ. կնքված*
*թիվ 4 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանք | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | անվանումը | չ/մ | ընդհանուր քանակը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր գինը |
| 1 | 45231187/506 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արազափ բնակավայրի 5-րդ և 6-րդ փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ | դրամ | 1 | - | - | - | - | 24,300,000.00 | 24,300,000.00 | 24,300,000.00 | 24,300,000.00 | 54,000,000.00 | 54,000,000.00 | 54,000,000.00 | 54,000,000.00 | 54,000,000.00 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:
Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

- ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).
- ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.
- ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.
- ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան | <<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ և <<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ կոնսորցիում |
| ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4, | ՀՀ, Երևան, Պարոնյան 21/4, |
| gnumnermetsamor@mail.ru | contact.urbandevelopment@gmail.com<br>info@legendint.com |
| ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900332000901, 900332239434 | Հ/Հ 1570006708267012 |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 02917998 |
| Համայնքի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ------------------ Է. Հովհաննիսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ------------------ Հ. Բանդուրյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |